թիւը եղել է 25,290, որից հայեր 17,820 հոգի, կամ 70½ առ հարիւր*):

Ինչ վերաբերում է Թիֆլիսի քաղաքացի (մոքալաքի) դասին, տեսնում ենք, որ նրա դրեթէ 96 տոկոսը հայեր են եղած, ազատ գիւղացիների էլ 81 առ հարիւրից մի փոքր աւելին:

Այս տեղեկութիւնները ունին պատմական նշանակութիւն:

Իր վերոյիշեալ տուեալներին Հաքստհաուզէն աւելացնում է, որ Թիֆլիսի բնակիչները յիշեալ թուականին կազմել են 4930 ընտանիք, բաժանուած 3662 տան մէջ: Աղնուականներից 16 անդամ պատկանելիս են եղել նախկին թագաւորական տան, 204-ն էլ՝ իշխանների դասին (ազնաւուրի):

«Այժմ», շարունակում է Հաքստհաուզէն, Թիֆլիսի բնակչութեան թիւը հաշուում են 50,000»:

Ասել է ուրեմն, ընդամէնը 20–22 տարուայ ընթացքում (1834-ից մինչեւ 1856), Հաքստհաուզէնի աշխատութեան հրատարակութեան տարին, բայց գուցէ նաեւ ճամբորդութեան տարին (1843, 11 տարում) Թիֆլիսի ազգաբնակութիւնը կրկնապատկուել էր:

«Ռուս տիրապետութեան տակ նա (Թիֆլիսը) անհունօրէն բարգաւաճել է»,— վկայում է այդ առթիւ գերման ուղեւորը:

Թիֆլիսից դուրս՝ Վրաստանի միւս վայրերի հայութեան մասին թուական տեղեկութիւններ չենք գտնում Հաքստհաուզէնի մօտ, եթէ չհայուենք այն, որ նա Կախէթիա (Սղնախի եւ Թելաւի գաւառներ) այցելած միջոցին հաշուել է 170 վրացական Օրթոտոքս եկեղեցիների դիմաց, 12 հայ լուսաւորչական եկեղեցիներ**):

Ի՞նչ է ասում մեզ Հաքստհաուզէն առհասարակ հայութեան ընդհանուր թուի մասին — Անդրկովկասում եւ նրանից դուրս, միասին առած: Այդտեղ նրա աղբիւրը Ներսէս Աշտարակեցին է, որ Կաթողիկոս ընտրուելուց յետոյ Պետերբուրգ էր գնացել, եւ որի հետ այնտեղ տեսնուել ու խօսակցել է Հաքստհաուզէն 1844-ի ձմեռը, Անդրկովկասից վերադարձի միջոցին:

Ահա թէ ինչ է հաղորդել Աշտարակեցին (Ա. 267).

«Հայ ժողովուրդը շատ ցրուած է ու մեծաթիւ: Նա ջրի զանգուածի է նման: Ասում են նրա թիւը 15 միլիոն է: Ես կարծում եմ, որ դա չափազանցուած է: Բայց 8 միլիոնից աւելի հայերի գոյութեան վրայ վստահօրէն կարող եմ պնդել: Հոմին*) անմիջապէս ենթակայ հայերից մօտ 30,000-ը կովկասեան նահանգներում են գտնուում: Իսկ թէ՝ նրանցից քանի՞սը Եւրոպայում են ապրում, այսինքն՝ Տաճկաստանում, Լեհաստանում, Աւստրիայում,— այդ մասին կարելի է միայն Հոմում տեղեկանալ»:

Դժբախտաբար, Աշտարեկեցին չէ մանրամասնում իր թուական տեղեկութիւնը հայերի մասին — 8 միլիոնը եւս անտարակոյս չափազանցութիւն է — չէ հաղորդում, թէ իր գիտցածով հայութեան ո՛ր մասը ի՛նչ երկրում է ապրում:

Վերջապէս յիշատակենք եւ հետեւեալ թուերը, որ Հաքստհաուզէն քաղում է հին ճամբորդների տուեալներից (Ա. 219).—

«Բոլոր ժամանակների ուղեւորները եւ մատենագիրները խօսում են Արաբսի հովտի (այսինքն՝ Այրարատեան Դաշտի) հայկական քաղաքների մեծութեան, նրանց բազմաթիւ բնակիչների եւ հարստութեան մասին: Նկատելի է, որ լեռներում չեն գտնուում ամրոցներ, ոչ էլ գիւղերում աշտարակներ՝ պաշտ-

*) Թէ ինչպէս է Հաքստհաուզէն վերոյիշեալ թուերին ու վիճակ. տախտակին յարմարեցնում իր աշխատութեան մէջ մի ուրիշ տեղ (Ա. 82) յիշատակած այն խօսքը, թէ «հայերը կազմում են Թիֆլիսի բնակչութեան ⅓-ից աւելին (10,000), դժուարանում ենք հասկանալ:

**) Հաքստ. մի տեղ (Ա. 287) ասում է. «Վրաստանում կան շատ թուով կաթոլիկ հայեր, որոնք իրենց գիրենք սիրով չեն հայ անուանում, այլ կաթոլիկ, կարծէք թէ դա ցեղի անուն լինէր»:

*) Հաքստ. յիշատակում է նաեւ (Ա. 287) չվէյցարական (Բազէլի) Բողոքականների Շուշիում գործունէութիւն սկսելու փաստը, անյաջող վերջաւորութեամբ: